

ԲԱԺԱՆՈՒՄ ԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 12 ծր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի հա-
մար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 ծր.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՍԻԿ ՎՆԵՐԵԼԻ
Իտալացի սոցիալ շտաբի
հրեային համար 40 սանթիմ
և իսկ վերջին հրեային հա-
մար 20 սանթիմ: Երկրորդ
սանթիմը անվճար համար
20 ժողովրդական կոմիտեի:

Վառձայի համար ձեռքի 10 սանթիմ



K. P. Kalémcarlagy
Mechitharistangasse W. 4
Vienna
(Autriche)

Պուշկարիոյ համար
Տարեկան 12 ծր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի հա-
մար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 ծր.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՍԻԿ ՎՆԵՐԵԼԻ
Իտալացի սոցիալ շտաբի
հրեային համար 40 սանթիմ
և իսկ վերջին հրեային հա-
մար 20 սանթիմ: Երկրորդ
սանթիմը անվճար համար
20 ժողովրդական կոմիտեի:

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹ ԶՈՐԵՎՈՒՄԻ ԵՒ ՀԱՄԱԹ՝ ՕՐԵՐԸ

Արդէն «Եւրոպայի» եր-
րորդ տարեշրջանը լրացաւ, ու
տակաւին արտասահմանի մաս մը
բաժանորդներ իրենց բաժնե-
գինները չեն գրկած, մանաւանդ
ամերիկացի բաժանորդները:
Ամբողջ տարի մը պատիկ թերթ
զրկելէ ետքը, երբ դեռ կը
ինայենք, արդէն կը կարծենք
թէ պէտք եղածէն աւելի աղ-
նուութեամբ վարուած կըլլանք
մեր բաժանորդներուն հետ, և
կը փափագինք որ, բաժանորդ-
ներն ալ շարաշար չի գործածեն
զայն:

Խմբագրութիւն

ՊՈՒԼԿԱՐԻՍ, ՄԱԿԵՒՈՒՄ, ԱՐԵՆԵԼԻ

Քարավէլովի նախարարութեան
կազմութիւնը չի կրցաւ Բ. Գուռը
մտահոգութենէ և Սուլթանը ի-
րարանցումէ զերծ պահել: Ան-
շուշտ բազմի կամեցողութեանց
պաշտօնական հաւատարմութեան
խանակուեցան իրարու, թուրք
կայսերական քոմիտէի, նէճիպ
Մէլհամէ, նոր նախարարակե-
տին և իր արտաքին գործոց նա-
խարար, Չանքովիստ Պ. Տանէֆին
բերնէն քաղցեց գաշնագրութեանց
ճշգրիտ կատարումի անկեղծ
խոստումները:

Կը հաստատեն թէ պուլկար կա-
ռավարութիւնը ինքզինքը պատ-
րաստ յայտարարած է խիստ մո-
տէն հակելու Մակեդոնական քո-
միտէներու վրայ և նոյնիսկ,
ի հարկին, անհրաժեշտ միջոց-
ներ ձեռք առնելու կարգն ու խա-
ղաղութիւնը պահպանելու համար:
Հետաքրքիր է սակայն տեսնել
որ, միջազգային պարտականու-
թեանց և հարկատու պետութեան
մը գերականցորէն պատշաճող
այս լեզուն երբեք չէ կրցած
Մեծ Վեհապետին հոգին խաղա-
ղեցնել: Սակայն այս օրուան կա-
ցութեան մէջ բոլորովին տարբեր,
բոլորովին մասնաւոր բան մը
կայ: Պ. Քարավէլովի անունը ա-
պահովագրութեան կարգ մը յիշատակ-

ներ կարծեցնէ, որոնք գիրու-
թեամբ երկրագի կրնան վերած-
ուիլ: Երկրագի մէջ հարկ չի կա-
սորվեցնել թէ անցեալը իր շուքը
կը ձգէ ներկային և մինչեւ ապա-
գային վրայ:

Երբեմն, այն հեռաւոր օրե-
րուն մէջ, երբ իշխան Ալէք-
սանտր Պաթէմպէրկ շտապով կը
հաւաքէր այն պուլկարական գե-
ղեցիկ յիշատակները զորս վայե-
լելու հաճոյալի վարձատրութիւնը
իշխան Պիզմարք պարգեւած էր
իրեն, անխուսափելի անկումի մը
վտարողայնն իսկ, Պ. Քարավէլով
կարեւոր գեր մը խաղցած էր իշ-
խանութեան եւ Պալքանեան եր-
կիրներու գործերուն մէջ: Իր
նախարարութեան օրովն էր որ
կատարուեցաւ Սրբեկեան-Սու-
մէլիի և Պուլկարիոյ միացումը,
այսինքն Պերլինի գաշնագիրը
խնդրոյ նիւթը առաջին յե-
ղափոխութիւնը—Արեւելեան այս
գաշնագիրը, որ արդէն պատ-
ուած ու բռնաբարուած է յամե-
նայնի, իր ինչ ինչ իսկական
յօդուածներուն սխառտման իւր-
բէն անգործագրելիութեամբ:

Այս անցեալը Սուլթանին երե-
ւակայութիւնը կը յաճախէ, զոր
ա՛լ աւելի կը միտադնեն Մակե-
դոնիոյ մէջ տեղի ունեցող անց-
քերը: Սօֆիայի մէջ արտասան-
ուած տարտամ խօսքերուն տեղ,
մակեդոնական քոմիտէներու
նկատմամբ «յոքնակի թուով»,
Սուլթանը անհունապէս պիտի
նախընտրէր ճշգրիտ, որոշ ու
գրական խոստում մը Մակեդո-
նական քոմիտէին վերաբերմամբ
«եզակի թուով»:

Պետութիւնները, որոնք իրենց
ձեռք բերուն մէջ Մայրագոյն Ա-
րեւելքի խնդիրը ունին, այսինքն
խնդիր մը ոչ նուազ զարհուրելի
ու կնճռոտ քան Արեւելեան դա-
սական խնդիրը, հարկ տեսան
միահամուռ ազգաբարութիւն մը
ուզել յեղափոխական տարրե-
րուն, և Բ. Գրան քաջալերութիւն
մը տալ: Այն դիմումին մէջ, որուն
նախաձեռնութիւնը Ռուսիա ը-
րաւ և որուն հետեւեցան Աս-
տրիա, Գերմանիա, Անգլիա, Ի-
տալիա և Ֆրանսա, տէրութիւն-

ները յարմար դատած էին ըն-
կերակցել իրարու Պալքանեան
ցամաքազգայնէ մէջ statu quo
պահելու անհրաժեշտութիւնը ան-
գամ մըն ալ չնշտելու համար:

Արդ՝ հայկական ջարդերէն,
Կրէտէի գործերէն և Թեսալիոյ
կռուէն ետքը, ներքին է հարցնել
որ եւրոպական համաձայնու-
թիւնը, իր անկարողութեամբը
հաշակաւոր, կրկին միտք ունի
անպատիժ թելադրելու այն տե-
սակ գործեր որոնց կատարման և
շարունակութեան առջեւ կրկնա-
պէս անզօր է—թէ իր տկարու-
թեամբ և թէ Ձիւնական կնճիռ-
ներով—քօնդրօլ հաստատելու:

Եթէ Մակեդոնիոյ վերջին մուծ
դէպքերը արգարեւ արժանի են
բոլոր պետութեանց ուղադրու-
թեան, պէտք չէ սակայն աչքէ
վրիպեցնել այն ծանր ախտա-
նիշերը որոնք օսմանեան կայս-
րութեան միւս անհամար կէտե-
րուն մէջ կը նշմարուին:

Սէլանիկի և շրջականերուն մէջ
ոճիրներ գործուեցան որոնք գեռ
չեն լուսարանուած: Տեղական
ազգաբնակութեանց մէջ, յոյն,
պուլկար, քրեճօ-վալաք և թուրք,
յարածուն ատելութիւն մը կայ
միշտ: Քիչ խղճահար քաղաքա-
գէտներ, որոնք վտանգաւոր չա-
փաղանցութեամբ մը «բաժանեա՛-
լի տիրեցեցեա՛ր սկզբունքը կը
գործադրեն», կը ջանան իրենց
տիրոջ ապահովութիւնը հիմնել
փոխադարձ թշնամութեանց ու
հպատակ ժողովուրդներու ցե-
ղային ատելութեան վրայ: Սօ-
ֆիայի Մակեդոնական քոմիտէին
կը վերագրուի խորհրդաւոր գոր-
ծունէութիւն մը, որ իր արդիւն-
քը պիտի տարածէ Պուլկարիայէն
դուրս, Մակեդոնիոյ և Ռումա-
նիոյ մէջ և մինչեւ Վոսփորի ա-
փունքը:

Այս բոլորը կը հաստատեն կա-
ցութեան անկայունութիւնը:
Կրակը կը միայն մոխրին տակ
եթէ, մէկ կողմէ, կարգ մը դի-
ւանագէտներ կը զարհուրին ժո-
ղովրդային պայթումներէն, ու-
րիշնք 1875—76ի և 1896—97ի
դէպքերով, պուլկարական վայ-
րագութեանց և հայկական ջար-

գերու յիշատակով լուսարանուած՝
կը սոսկան մանաւանդ այս նախ-
ճիրներու վերանորոգումէն և այն
ահաւելի պատասխանաւորութենէն
ուրկէ անշուշտ չի պիտի կարո-
ղանայ վրիպել եւրոպայ այս ան-
գամ:

Ոչ եւս պիտի գտնուի կլատու-
գոնիազդու ձայնը՝ քաղաքակիրթ
աշխարհը եւրոպական խղճին
բողոքներով թնդացնելու հա-
մար, բայց չի պիտի պակսին ու-
ղիղ սրտեր ու հեռաւես մտքեր
եւրոպայի բարոյական արդ տագ-
նապին առջեւ բարձր պահելու
համար:

Սակէն պարագայի մէջ, խաղա-
րութեան և ընդհանուր բարգա-
ւաճման շահուն համար, գիւա-
նագիտութիւնը պարտաւոր է ա-
մէն միջոցներով կանխատեսել
ինչ որ ինք գարմանել ամենէն
աւելի դժուար կը գտնէ:

ԹԱՅ

ԸՆԿԵՐԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԹՈՒՐԻՔԱՆ
(DIE SOZIAL-ÖKONOMISCHE TURKEI)

(Շար. Ասխրոյ քիւնկ)

Գ. դուլքը որուն խորագիրն է
«Բնական հարստութիւնները», կը
խօսի Թուրքիոյ արմաթներուն,
ձիախոտին, ափսոսին, մետաքսին
բամպակին, միրգերուն, հանքերուն
և անտաններուն վրայ:

Փոքր Ասիա երբեմն աշխարհի
շտեմարանը եւ մրգապարտէզը նկատ-
ուած, հիմա թուրքին ձեռքին մէջ
կորսնցուցած է իր նախկին հա-
րուստ արդիւնաբերութիւնը: Ահա-
գին տարածութեամբ հողեր անմշակ
կը մնան: Կ. Պոլսոյ ալիւրի պէտքը
Ռուսիա եւ Հունգարիա կը հոգան:
Այն երկիրը որ երբեմն նշանաւոր էր
իր անտառային արտադրող հարս-
տութեամբ, ունի այսօր գաւառներ
ուր փայտի չգոյութեան կամ նուա-
զութեան պատճառաւ բնակիչները
կենդանի աղբ կը վառեն:

Արմաթին պէս դաշտային միւս
բերքերն ալ իրենց արդի քանակով
չատ աննշան են հողին արտադրելու
կարողութեան ձեռքադատմամբ:

Պրուսա միջին հաշուով տարին մի-
այն 350,000 ֆրանքի մետաքս կար-
տածէ:

Միրգերու մեծ արտադրութիւնը,
բացի ծովեզերեայ եւ երկաթուղի
անցնող սեղերէ, առեւտրական տե-

սակէտով ու եւ է օգուտ չունի երկրին համար :

Հարստութեան կողմէ հողային արդիւնաբերութենէն վար չեն մնար հանքերը : Բայժինէ զսա ամեն տեսակ մետաղ կը պարունակի Անատոլիոսի հողը : Սակայն ցարդ գրեթէ 250 հանքեր բացուած են , որոնց 3/4ը Ասիական Թուրքիոյ մէջ են , բայց անոնցմէ հազիւ 30ը հիմա կը բանուի , ան ալ խեղճ ու կրակ կերպով :

Ածուխի ընդարձակ եւ ընտիր հանքերու գոյութեան հակառակ՝ Թուրք կառավարութիւնը իր շոգե նաւերուն համար անպիտան անձուխ կը գնէ :

Երկաթի , աղի , ծծումբի , պղնձի , արծաթի , կապարի , քարկղի , մարմարի , եւ ուրիշ ազնիւ քարերուն , անթիմօնի եւ այլ առատ հանքեր ամենամեծ մասամբ հողին տակ կը սպասեն շահագործող ձեռքերու :

Թուրքիոյ անտառային հարստութեան վրայ զաղափար մը տարու համար կը բաւէ ըսել որ գերմանացի մասնագէտներու հաշուով , Ասիոյ 8 վիլայէթները կրնային Եւրոպայի 2/3 մասին վառելիքայտը հայթայթել անսահման ժամանակի մը համար :

Այս բոլոր բնական հարստութիւնները , որոնց իւրաքանչիւրին տեղերը նշանակուած են գրքոյկին մէջ ուրիշ մանրամասնութիւններով , եւ որոնք բաւական էին Թուրքիան անտեսապէս վերականգնելու . երկու պայմանով միայն կրնային պէտք եղած կերպով շահագործուիլ . այս պայմաններն են , հեղինակներուն կարծիքին համեմատ , խճուղիներու եւ երկաթուղիներու շինութիւնը եւ տուրքերու կանոնաւոր բաշխում ու միանգամայն վարձու տարու գրութեան ջնջումը իր բոլոր զեղծումներով : Թուրքիա առաջին պայմանը լրացնելու հարկաւոր գրամը չունի . իսկ երկրորդը որ բարենորոգումներու գործադրութիւն կենիադրէ , անկարելի է սպասել Թուրք կառա-

վարութենէն որուն նշանաբանը եղած է միշտ «մեզմէ ետքը ջրհեղեղ» :

Եթէ յիշուած երկու էական պայմանները գործադրուին , ինքնին անոնց պիտի հետեւին միւս նոյնպէս հարկաւոր պայմանները , զիստորապէս արտասահմանեան զրամազլիին եւ մասնագիտական ուժերու մուտքը երկրին մէջ :

Դ. Կրուխը խորագրուած է «երկրագործութիւնը եւ հողային կալուած» : Կառավարութիւնը մաքէն չանցնելու ստատիստիկ երկրագործութեան զարգացմանը . հողագործը կաշխատի հինաւուրց գործիքներով եւ եղանակներով . տուրքերը եւ մասնատանց անոնց հաւաքման ձեւերը կը ճնշեն գիւղացին . ասկէ զատ Թուրք գիւղացին միտում չը դրամաշխատելու . Թուրքը առհասարակ ֆիզիքական ծանր աշխատութենէ խոյս կուտայ եւ կուզէ զայն թողուլ քրիստոնեաներուն : Զարմանալի չէ ուրեմն որ շատ գիւղեր յաճախ Թուրքութենէ կը տառապին :

Իրբայցը մանրամասն տեղեկութիւններ կուտայ Թուրքիոյ հողային սեփականութեան տեսակներուն (միւլթ , միրի , վազըֆ) վրայ , վիճագրութեան պակասութիւնը անկարելի ըրած է հասկնալ թէ այս տեսակներէն որը երկրին հողին որքան մասը կը կազմէ : Հողը մեծ մասամբ կը գտնուի մեծ սեփականաւորներու ձեռքին մէջ , որոնք տիրէպէտներու շահաւորն են : Այսպէս խեղճ գիւղացին ստիպուած է հարուստ կալուածատէրերէ մշակելու համար հող վարձու առնել անոր բերքին կէսը վճարելով անոնց :

Մինչեւ այսօր Թուրքիոյ մէջ գոյութիւն ունի տեսակ մը հողային գերութիւն . աղքատ գիւղացին իր գաշտը մշակելու հարկաւոր միջոցներէն զուրկ կը զիմէ զրամատէրերուն , վախառուներուն , որոնցմէ փոխ կառնէ գրամ եւ սերմացու , փոխառն խոտանալով իր քաղելիք բերքին կէսը փոխատուին ալ մինչեւ որ իր ամբողջ պարտքը լինայ :

ասկէ զատ ամէն տարի իր պարտատիրոջ կը հատուցանէ իր փոխ առած սերմացուն , եւ որովհետեւ այսպէսով գիւղացին իր աշխատութեան մէկ պիտիկ մասը միայն կրնայ իրեն պահել եւ անկարող կըլլայ իր բոլոր պարտքը վճարել , իր կեանքին մէջ անկարգ զիրք մը ունենալէ կը զերկուի :

Անտառային սեփականութիւնն ալ կը բաժնուի քանի մը տեսակի , որոնք յիշուած են գրքոյկին մէջ :

Յիշուած պարագաները եւ գիւղացիին կեանքին ու սեփականութեան անապահովութիւնը առաջ բերած են երկրագործութեան արդի յետամնաց վիճակը :

Հարկահաւաքներէն , աւագակներէն եւ վաշխառուներէն ու պաշտօնեաներէն կը կողոպտուի շարունակ թշուառ գիւղացին , որ ոչ ճամբայ կը գտնէ իր ապրանքը փոխադրելու եւ ոչ գատարան՝ իր հարստահարչներուն դէմ բողոքելու :

Իրերու այս վիճակին մէջ բնական է որ շատեր հարկահաւաքներէն ազատելու համար փախուտական կը դառնան , կամ իրենց տունը տեղը ձգելով քաղաք կը փոխադրուին ունէ տրհասով զբաղելու կամ մուրալու համար :

Ահա ինչու համար հողին միայն 1/10ը կը մշակուի հիմա եւ 9/10ը խոպան կը մնայ . աշխարհի ամենէն արդաւանգ եւ գեղեցիկ երկիրներէն մէկը տակաւ անապատի մը կը վերածուի եւ իր ժողովուրդը ծանր զրկանքներու եւ ծայրայեղ աղքատութեան զատապարտուած է :

(Շարունակելի)

Սուսալ եւ վորձառու հիւանդապահուհի մը իր արհեստին վերաբերեալ զբաղմունք կը փնտռէ :

Պէտք ունեցողները թող խումբագրութեանս գիմեն :

2-5

—)(—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԻՆԱ

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ

1876ի ՊՈՒԼԿԱՐ ԱՊՐԻԼԵԱՆ ՅԵՂԱՓՈՒԹԵՆԷՆ



(Շար. նախորդ քիւիկ եւ վերջ)

Իրինան մայրական գործը ու համբոյրը չէր յիշեր , սակայն միշտ կը զգար իր հօր հոգատարութիւնը , եւ իր հողին անով տաքցուցած էր :

Այդ պատճառաւ առ տեւական համբոյրը , զորաւոր տպաւորութիւն գործեց Իրինայի վրայ :

Նա չը հասկցաւ . թէ հայրը իրեն հետ վերջին մնաս բարովը կընէ . արդեօք յոյս չունի՞ր այլեւս տեսնուելու . թէ ինքզինքը քաջալերելու համար կընէր :

Դողողալով անգամ մըն . ալ իր հօր ձեռքը համբուրելու ծնրադրեց :

— Հիւանդ ես որ կը դողաս , հարցուց հայրը :

— Ի՞նչ մը , պատասխանեց Իրինան , ջերմ է :

— Աղջիկ , զգուշացիր , նոր ուժ պէտք է , դալիք գառնութիւններուն զմտադրելու կորով պէտք է , եւ աչքովը ցուցուց անոնք՝ որոնք բանտի խորերը կը փտակին :

Զայտիկն ընդհատեց անոնց խօսակցութիւնը եւ Իրինան դուրս տարաւ :

Բանտէն դուրս ելլալու ատենը Իրինա նախանձով կը դիտէր այդ խոնաւ վայրը , քարձր ու նեղ ծակ մը որ լուսամուտի տեղ կը ծառայէր , եւ ինքնիքին կը մտածէր . այս մարդիկ հոս հայրենիքի համար կը տանջուին , ատոնք ազատութեան մարտիրոսներն են . միթէ ինք չէր սերէր իր հայրենիքը բոլոր սրտէ . ինչու՞ զինքը փշալի պտակին , կախաղանին ու խաչին արժանի չէին գտած : Օ՛հ , որքան երջանիկ են այս գերիները իրեն բաղաւտելով . ինքնազոհութեան ջերմ իղձը զինքը կայրէր կը տոչոչէր : Ո՞ր երթասարգը որ ազնիւ հողին զոհարելութեան պարտականութիւն ցոյց չէ տուած :

Իրինա թանջտայն հաւատքով կը թողուր թէ չուտով իր հայրը պիտի տեսնար . պիտի պատմէր իր բոլոր քաջածնիքը , եւ անոր խրատները

պիտի ուզէր : Դպրոցի բակէն անցնելով ոչ ոք գտաւ եւ մտազբաղ կանգնած սկսաւ Եանթրախի ակնապիշ նայիլ , Բայց մէկէն քունէն արթնացածի պէս սկսաւ քալել :

Նամբան հանդիպեցաւ ստուար , խոռոնիճաղանձ ամբոխ մը , որուն առջեւն երկու շարք կանոնաւոր զօրք , սուսերամերկ մահուան դատապարտուածները կը տանէին , որոնց մէջն էր նաեւ իր հայրը . նա կախաղանի կը դիմէր հանդարտ ու վեա կերպարանքով , իսկ միւսները Բանով ու Բորով վայժտաները համազուած ու հաստաս քայլերով :

Օրիսովայի նշանաւոր վոյժտան , առանց վրէժխնդրի ըլլալու , չէր ուզեր մեռնիլ , նա քանի մը անգամ փորձեց խօսիլ իր հայրենակիցներուն անոնց անգործունէութիւնը , վատութիւնը ու թուլամորթութիւնը երեսին զարնելով , քանի մը հարուածներ զայն լուցնելու համար անոր գլխուն տեղացին , բայց Բանով չի լսեց :

Ամբողջ մարմնով վերաւորուած , արիւնշաղախ նա կը շարունակէր խանդով խօսիլ , իր հայրենական տան առաջը , իր ծնողքը սփոփեց անով որ ինքը ոճրագործ մը չէ , այլ արդար գործի մը համար կը մեռնէր , բայց

նոյն ձեւով հոս ալ ընդհատեցին . կախաղանի առաջ նա իր հարստահարչներուն գառնալով ըսաւ որ իր ընկերներու մահովը ապստամբութիւնը չը վերջանար եւ իրենց վրէժը լուծող պիտի ըլլայ , իսկոյն չուանը վզին անցուցին ու մարմին մը սկսաւ օդին մէջ օրորուիլ իր ընկերներուն հետ վարժապետ Գիրօսն քառ մը չորաստանեց , նա լսիկ ու հեղիկ կախաղան բարձրացաւ . նա , իբրև մարդ , իր պարտականութիւնը կատարած էր , եւ գործի շարունակութիւնը իր աղջկան կը թողուր , ատոր համար ալ մահը քաջութեամբ դիմաորեց : Նա վրէժ չէր պահանջէր , փափաքած էր իր հողով մեռած ազգին կենդանութիւն տալ , եւ այդ բարձր ու վեհ նպատակին սերտը համար , իր կեանքը անոր կը պարգեւէր :

Այս երեք հողի օրինակը պերճախօս կերպով կը յայտնէր ամէն մեկուն թէ , երբ զաղափարը , այսպիսի հետեւողներ ունեցած է , նա մեռած չէ : Պուկարները կախաղաններու տեսքէն սահմուկած էին , իսկ Թուրքերը ուրախ քէյի կընէին . մինչև իսկ հարէմի հանրմիտը , պայրամի հագուստներով , կը փութային հաճոյքով առ քաղաքի ծայրը տեսարանը դիտելու :

Այդ հաշուով Ատրպատականի թե-
մի բոլոր գաւառները միասին
կունենան 12 ձայն այսինքն թաւ-
րիզին հաւասար, որ մեր կար-
ծիքով ապօրինի բան է: Առաջ-
նորդը ոչ թէ մենակ թաւրիզի
հաճար է, այլ ամբողջ Ատր-
պատականի թեմի՝ ապա ուրեմն
ամբողջ թեմի ժողովուրդը ընտ-
րողական գործում հաւասար իրա-
ւունքներ պէտք է ունենայ: Եթէ
քաղաքներ կու թաւրիզառանձին
առանձին ժողովուրդ հաշուենք,
կամ իրբեւ մի մի գաւառ այն ժա-
մանակ երկու երկու ձայնից թաւ-
րիզ կունենար ընդամենը չորս
ձայն: Ահա այս գէպքում կա-
տարած ընտրութիւնը աւելի օ-
րինաւոր կը լինի:

Չը նայած պատերին կայցրած
յայտարարութեան որ այդ օրը
պատարագից յետոյ կարգացուե-
լու է Էջմիածնից ստացուած կա-
թողիկոսական կողմէն՝ եկեղե-
ղացիին էլի փայլում էր իր դա-
տարկութեամբ: Երեւի վաճա-
ռականական հաշիւների տազ-
նապը խիստ զբաղեցրել էր ժո-
ղովրդին: Մենք չի գիտենք թէ
ե՞րբ թաւրիզացիին ժամանակ ու-
նի իր հասարակական գործերով
հետաքրքրուելու: Դուցէ կոն-
գակի լուրը արդէն հասաւ քա-
ւանսարանները, բայց արդեօք մի-
րոպէ հաշուեցողքը դէն ձգե՞ց
ու մտածե՞ց իրան համար արժա-
նաւոր հովիւ ընտրելու մասին,
մի հովիւ որի գէմ այլ եւս արը-
տունը չունենար, ինչպէս սովոր
է միշտ տրանջալու, գէշ լալկան
երեխայի նման, բայց չստել ի՞նչ
է իր պահանջը, ի՞նչ է լացի
պատճառը: Դէ՛, այժմ ընտրեցէք
ձեր ուզածը և դրէք ձեր պա-
հանջը:

Իրինա հաղիւ կրցաւ զինքը տուն
նետել: Իր հիւանդութիւնը կրկնե-
լով ընկզմեցաւ անկողնոյ մէջ և
չաբաթներով պատկած անցուց: Սօ-
ւաքայրը եղածը իմանալով կուգէր
միևիթարել զինքը, և իր անկողնէն
չէր դատուեր:

Հիւանդի անկողնը բոլորած էին
պառաւներ, հարսեր ու աղջիկներ,
և ամէնքն ալ իրենց խոր վիշտը ու
ցաւակցութիւնը կը յայտնէին: Ու-
մանք կը պատմէին թէ կախուածնե-
րու դերեզմաններուն վրայ ելկին-
քէն լոյս է իջեր, կանթեղներ տեսեր
են, իսկ ուրիշները կը պատմէին
Տրեանովօյի վանքի կոխը, (500 հո
գին 5000 ի բարձրացեր էր) և կը հա-
ւատացնէին թէ Եանթրայի հոսանքը,
բոլորովին արկենաներկ, սպանուած
գիւղերէն, ուղղութիւնը փոխեր է,
իսկ ուրիշներ կըսէին թէ կոտուին մէջ
պուլկար յեղափոխականները շատ
թուրքեր մորթեր են, և ամենուն
համար վրէժ լուծեր են:

Իրինա երբ ապաքինեցաւ, ուղեց
գիւղ վերագո՞ւնալ: Որովհետեւ
Աերպ-թուրք պատերազմը յայտարար-
ուած էր, սղատութեան յոյսերը նո-
րէն յարութիւն առին օրիորդի ջախ
ջախուած սրտին մէջ: Նա բուն ձրգ-
տում ունէր իր պաշտելի հօր ձեռ-

Փառք Աստուծոյ, հիմա խօսմ
դա ձեր իրաւունքն է:

ՄԻՐՉԱ

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԿԵԱՆՔԷՆ

Յետոյ ճաշի ժամ է. իր ներ-
քիններուն աչքին առաջ զորս
միշտ գաղտնարար կը գիտէ և
ասոնք ալ զինքը կը գի-
տեն, Ապտիւլ Համիտ կուտէ
կը խմէ: Ընդ հանրապէս կերածը
հաւկիթ է որ ամենէն նուազ թու-
նաւորելի սնունդն է: Խմածը
կաթ է որ լաւագոյն հակաթոյնը
ըլլալու յատկութիւնը ունի: Եր-
բեմն հաղիւ քիչ մը միս կուտէ և
քանի մը խմորեղէններ, անու-
շեղէններ միայն իրեն աչքը
մտած են: Սեղան եկած բոլոր
ամանները կը դուրս բերուած են
որոնց կնիքը ինքը իր ձեռքովը կը
քակէ, յետոյ անոնց դպչելէ ա-
ռաջ, իւրաքանչիւր պատառը
հոտըտացնել կուտայ միշտ իր
չուրջը գտնուող կատուններուն
և շուններուն, երբեմն ալ մէկ
մէկ պատառ անոնց կը շնորհէ
ապահով ըլլալու համար թէ թոյն
չեն պարունակեր անոնք որպէս
թէ անհոտ և ուշ ազդող թոյն
գտնուած չըլլար աշխարհիս Ե-
րեսը:

Վերջապէս երեկոյ կրլայ
մահաշշուկ ժամանակ, որուն
միջոցին այս խեղճ մուկն անձ-
նատուր կըլլայ կատարի ջղա-
ձգութեան մը: ալ ամեն ինչ որ
կայ մարդկային՝ կաւրտի կա-
նիքուութեան այն օր մէջէն և
գաղանը, ահարկու գաղանը Ե-
րեւան կուգայ որ ինքզինքը յի-

նարկած գործը շարունակելու:

Ի դուր կախառէին զինքը տօ-
համոզելու, որ քաղաքը վարժուհի
մայ:

— Դու ալ, տղաս պէս պիտի յա-
ջողիս, ըսաւ վանքի կուռի մէջ իր
տղան կորսնցնող զբացին, տես, ու-
րիշները ինչպէս կը զգուշանան: ու-
րիշները կը զրգեն քալելու, իրենք
կը պահուրտին, որովհետեւ խելացի
են, և յետոյ մեծ ազգասէրները ա-
նոնք են:

— Հապա սվ պիտի սորվեցնէ ազ-
գին սղատութեան համար մեռնելու,
երբ ես ու դու պահուրտինք: ըսաւ
Իրինան:

— Միայն հայրդ ու դաւա՞կս զբա-
նուեցան ազգը սորվեցնելու, իսկ
անդին խելօքները կըսեն—խելացին
պէտք է զգուշանայ զինքը վտանգի
ենթարկելէ—արտասուալից աչօք ը-
սաւ հէգ մայրը:

— Ատոնք վատեր, երկչոտներ են
որ այսպէսով զիրենք կարգարացնեն,
և այդպիսիներն են որ սաշափ լաւ
սկսուած գործը վտանգեցին, գայրոյ-
թով ըսաւ Իրինան:

Աղջիկս, աղաւ երբ ըլլար նէ պիտի
մեռնէր, միակ սիրտիսն առ է որ
այսպիսի մեծ գործի մը համար մե-
ռաւ, Բայց ինձի ծանր եկաւ մի քա-

մարացած տեսնելով, կը խօսի և
կը գործէ:

Վախը, սարսափեցուցիչ զազ-
րելի վախը վզին կը փաթթուի
ու անդամները կը ջլտառուին:
Գրչիւրէն մթութիւնէն կը սողայ
և կը ջանայ, կուզէ փարատել
զայն, երբ ոչինչ կարող է յազ-
թել անոր, անգամ մը որ երկ-
րիս վրայ տարածուի ան: Ի դար
լուսաւորել կուտայ պալատը մին-
չեւ ամենայնպէս անցքերը և ա-
մենափոքրիկ անկիւնները, իզուր
ծածկել կուտայ պատահանները
որ գուրսի մթութիւնը չի տեսայ
և որ զինքը կը խենդիցնէ: Ի
դուր լուսութիւնը կը խզէ հնչեցնել
տալով բոլոր իր նուագարանները
և պահապան զինուորները վարը
քալեցնել տալով որ ոտքի ձայ-
ներ ելնեն: Ի դուր իր ներքինի-
ներուն ընթերցումներ կամ մէկ
քանի կանանց երգել կուտայ,
վախը անոր ուղեղը կը հարուա-
ծէ և սիրտը կաքցունէ: Կանգնե-
ցնցումներ բոլոր մարմինը կը
զղրգացնեն: ակռանները կը
կափկոփէին և աչքերը կը մը-
թագնին: Այն տեսն սարսափե-
ցուցիչ կատաղութեան մը անձ-
նատուր գետին կը գլորի, կա-
պերտները կը խածնէ, անէծք-
ներ կը կարգայ և զառանցանք-
ներու մէջ մէկ քանի սպանու-
թիւններու հրամանը կարճակէ:
Իրեն կարմիր գոյն պէտք է սե-
ւին հետ մաքառելու համար և
միայն արիւնը կընայ այդ գոհա-
ցումը տալ: Լուսնոտի մը, յի-
մարի մը նման կըսպաննէ և
գայթակղեցուցիչ մարտիրոսու-
թիւններ ու անանուանելի շար-
չարանքներ գործադրել կուտայ
ինչպէս 10 տարեկան այն թրչ-

նիսի հեզնական ակնարկները թէ
«աղաւ թրնովայի վայրի պիտի ըլլայ
եղեր» իրենք, իրենց մտաբ անգամ
չեն կարեր ուրիշներու օգտին հա-
մար, իսկ ծաղրելու համար լեզու ու-
նին: Ատոր համար, ձեզի խրատ
կուտամ, աղջիկս, ես կեցէք ձեր
հիտաւորութիւնէն, ամէն մարդ իրեն
համար կապրի եղեր:

— Ոչ, մայրիկ, քու օրինակելի
զաւակիդ արիւնը ծաղրողները քանի
մը ապերախներ են, ժամանակը
պիտի պատժէ զանոնք, հայրենիքը
անոնց սձիւններուն պիտի խնկարկէ:
մի սրտմիր, ամէն բանի վախճանը
մտեցած է:

Իրինան մտիկ չըբաւ և ես չը
դարձաւ, որովհետեւ թուրքերը կա-
նանց վրայ այնքան ուշադրութիւն
չէին դարձներ:

Նա իր գիւղը վարժուհիի տեղ
գտաւ, և հոն բոլորովին անձնա-
տուր եղաւ ժողովուրդը լուսաւորելու
գործին: Եւ իրաւունք ունէր, թէ եւ
յեղափոխական չէր կրնար ըլլալ,
բայց իրբեւ ուսուցչուհի իր պարտքը
կը կատարէր, այնպիսի սիրով ու
անձնուրացութեամբ որ ուսուցիչնե-
րու մէջ քիչ կը պատահի: Ինքը ոչ
միայն գիւղի մանուկներու՝ այլ և
իրենց ծնողներու գաստիարակուհին
կը համարուէր:

ուսու աղջկան վրայ որ գժբաղ-
դութիւնը ունեցած էր այդ հրէ-
շին ներկայութեանը, իր ման-
կական ձեռքովը խառնել սեղա-
զին վրայ դրուած հրազէն մը և
որուն եղունքներուն և մտին մէջ
կարմրեցած երկաթի կտորներ
տուաւ:

Ահա Սուլթան Համիտը, այն
զմայլելի, հիւանալի, հրաշալի
կարմիր Գաղանը որուն դարպաս
ընելու շղագրի սեւիցէ կլայտում
մը, որուն շքանշանները կուրծ-
քերնուն վրայ պտտելու չեն վա-
րանիր ամէն գաստարգի մանկ-
լաւիկներ և գեւ հոգի տուողներ
չեն պակսիր անոր շնորհներուն
և բարեկամութեանը!!!

ՆԱՄՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. Պօլսոյ Ազգ. Հիւանդանոցի հո-
գաբարձութիւնը նոյն հաստատու-
թեան «Որբանոցին մէջ», «որբերու
ձեռամբ» ինպատ այն անհօգ անտէր
մանուկներու պատրաստած սիկարի
թուղթին սպառումը ալ աւելի շատ-
ցնել և այսպէսով հետզհետէ բազ-
մանալու վրայ եղող երկսեռ որբերու
պատասպարալներու ամէնօրեայ և
բազմակողմանի պէտքերուն հասնե-
լու համար նորբերու հրահանգած է
մեզ այսուհետեւ սիկարի թուղթի
տուփը վաճառել 2,70 ֆր. փոխան
2,90 ի և խնդրած է տեղական թեր-
թերու մէջ զայս ծանուցանել ի
նպատակ ազգային այն մեծ հաստա-
տութեան և բազմաթիւ պատասպար-
եալներուն:

Աւելորդ է թուղթին գնոյն վրայ
եղած զեղջիւն հետ անգամ մըն ալ
կրկնել տեսակին հինէն աւելի ազ-
նուացած ըլլալը, որ ծանօթ է ամեն
գործածողներու:

ՏԻԳՐԱՆ ՊԻՊԵՐԵԱՆ

—)(—

Երիտասարդ վարժուհին իր ուժերը
վերստանալով, հոգեպէս զօրացաւ:
Նա ուրիշներու սորվեցնելով, ինքն
ալ կը զարգանար, իր առջի ցնորք-
ները վերածուեցան առողջ, համոզ-
ուած ու ազնիւ զգացումներու յա-
փշտակումին: Ծատ մը անձնուէրնե-
րու սիրոյն ազգեցութեանը ներքեւ
էր որ Իրինաի պաշտելի հօր մա-
սին ունեցած հոգեկան վիշտը թե-
թեցաւ:

Ազգային աղետալի շարժումն իր
որբանոցին մէջ խեղդուելէն վերջ,
Աերպ-թուրք այնչափ պատերազմը
հայրենասիրուհւոյն ջախջախուած յոյ-
սերը նորէն վերածնեցին:

Օրուան լուրերը Ազատարար Բու-
թիւրք պատերազմի սկզբնաւորու-
թիւնը կը հաստատուին:

Վարժուհին իր մեծ սաներովը,
ազատարարները գիւտառելու կը
պատրաստուէր, երբ զօրավար Կուրքօ
իր քաղաքներով Պալքանը անցաւ,
Իրինաի աշակերտները պուլկար հո-
սակ գունդեր կազմեցին—իսկ ինք
Գթութեան—քոյր... եղան...

Девьян Парт. П. У.

—)(—

ՌՈՒՍԻԱ

Ռուսաստանի մէջ ուսանողական խռովութիւնները կը սաստկանան և համաճարակի կերպարանք կառնեն:

Դեռ անցեալ օրեր կը թափանչուին նախարարին ուսանող մը գնտակահար ըրաւ:

Աւելի մեծ յուզումներ ու ցոյցեր տեղի են ունեցեր Ռուսիոյ հին մայրաքաղաքի Մոսկովայի մէջ:

Ստաւրոպոլի մէջ յուզումները կը շարունակուին: Քիչ մը առաջ քիւրդները կը շարունակուին իրենց կողմէն:

Խարքովի, Քիէվի և Օտէսայի մէջ ալ նոյննա՛ն թէեւ թեթեւ կերպով:

Ռուսական սինթոն ալ փիլիսոփա զբաղէտ հռչակաւոր կոմս

Թօլսթոյին դէմ գրգռուել է և զայն ուղղափառ եկեղեցիի Կոնստանտին Գրիգորի Կոնստանտինով Երևանի Կոնստանտինով Երևանի Կոնստանտինով:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Եզրի պատճեն «Սուրհանդակ» կը հաղորդեն որ ոմանք սկսած են դժգոհութեան ձայնը հանել:

Քիւրդները կը շարունակուին իրենց կողմէն: Քիչ մը առաջ քիւրդները կը շարունակուին իրենց կողմէն:

Կաթողիկոսը, որ հիմա թիֆլիզ կը գտնուի մաագիր է ուղեւորուիլ Բեսարաբիոյ թիմը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսոյ մէջ կրէտէն ստացուած տեղեկութիւններու համաձայն՝ կրէտացիները չեն յուզուած չորս պետութեանց ալ յայտարարութեան վրայ:

Ռուսական սինթոն ալ փիլիսոփա զբաղէտ հռչակաւոր կոմս

կեր է, և ձիվէլէկեանը ձերբակալուել է, կասկածելով թէ երիտասարդ թուրքերու հրատարակութիւնները կը ցրուէ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Փէնէրալ Պօթի հեռ սկսուած բանակցութիւնները ամբողջովին յուրը ինկած են:

Անգլիացի զինուորական վիճակը խիստ դժուարին է: Եկած վերջին օգնութիւնները բոլորովին անզօր են պատահած կորուստներուն տեղ բռնելու:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպոլի մէջ ցոյցերը կը շարունակուին: Ռուսներու ստուար խումբ մը ոստիկանատան ու բանտերու թաղը խուժելով, սկսած են պատահանները կոտորել:

Ահաւասիկ այլ և այլ քաղաքներու մէջ կատարուած ձերբակալութեանց ցուցակը:

Խարքովի մէջ ութը հոգի վիրաւորեալ, 136 ձերբակալուած որոնց 24ը դեռ բանտը կը մնան:

Ռուս շատ մը նշանաւոր բրոֆէսորներ և գրագէտներ բուլղարացի մը պատրաստեցին իշխանութեանց դէմ՝ ուսանողները

և ուսանողուհիները զսպելու համար գործ գրած վայրենի միջոցներուն համար:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Մակեդոնական քովիթէներու ընդհանուր ժողովը՝ որ տեղի պիտի ունենար Սօֆիայի մէջ, յետաձգուած է:

Արդարադատութեան նախարարը երեսփոխանական ժողովին ներկայացուցեր է մամուլին և ներման վերաբերեալ օրինագիծը:

Եթէ մամուլի այդ օրինագիծը ընդունուի, այն ժամանակ Պուլկարիոյ ամէն մի կատարելապէս սակ բնակիչ իրաւունք պիտի ունենայ թերթ կամ ամսագիր հրատարակել:

Պուլկար և Ռուսիոյ վէճը միջով սքիւսպանման և Պուրէշի գատավարութեան առթիւ, նոր երեւոյթ մը կը ստանայ: Պուլկարական նախարարութիւնը, որուն յանձնուած էր դատաւարութեան թուղթերը ուսումնասիրելը սրոյցած է որ միջով սքիւսպանման թեման առթիւ: Մակեդոնական քովիթէին դէմ գաղափար համար շիբուեր միայն հարցաքննութեանց թուղթերը ունենալ, այլ պէտք է անձամբ լսել գատապարտեալներու վկանները:

Ձ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

Բէրլինէն մարտ 9ին կը հեռագրեն թէ զեղին թուղթի վրայ գրուած կայսերական հրովարտակ մը փակցուած է փոլոցներու մէջ, որով կը յայտարարուի թէ օտարներու թընամի բոլոր ընկերութիւնները խստաբար պիտի պատժուին:

Մարտ 9ին նոյնպէս Բէրլինէն կը հեռագրեն թէ գաղափար կից պետութիւններու ներկայացուցիչներէն կազմուած ժողով մը մէջ, Անգլո-Ռուսական միջագետքի մասին, որուն կը նախագահէր կոմս Վալուէրը, որոշուեր է որ գործարարներու և վստակութեան հետեւալ առաջարկները զօրքերը ետ քաշեն թիֆլիզի մէջ գտնուած վիճելի հողէն երկաթուղիի շինութեան գործը առայժմ դադարեցնեն, մինչև որ խնդիրը քաղաքագիտական միջոցներով չտկուի:

ՏՕԲԹ. ՍԻՄՈՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Ի ՅԻԼԻՊԷ

Մանկարար՝ կնիստաբոյժ և մասնագէտ միզային հիւանդութեանց որ բաւական ժամանակ է վեր բարի կը գտնուէր վերոյիշեալ հիւանդութիւններու նորանոր գարմանները ուսումնասիրելու համար, վերագործած ու միջիպէ հաստատուած է պողոտայի վրայ նախկատան ճիւղ գէմի փողոցին մէջ, Հիւանդ կընդունի ամէն օր ժամը 2—6 հինգ շաբթի օրերը միևնոյն ժամերուն միայն կիներ ձրիարար կը դարձան ու ին:

Отговорникъ: Д-ръ М.Х.ЖРДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.